ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ԳՅՈՒՂԱՇԽԱՐՀԻ ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ «ԲԱԺԱՆՈՒԹՅՈՒՆ» ՎԻՊԱԿՈՒՄ

Բանալի բառեր *– Գրող, վիպագրական արձակ, գյուղաշխարհ, քաղաք, բարքեր, աշխարհայացք, բաժանություն, հարաբերություններ, իրողություններ*

Ղազարոս Աղայանի գեղարվեստական երկերում առանցքային նշանակություն ունեն ազգային կյանքի պատկերումը, հայկական բարքերն ու սովորույթները: Գեղարվեստական արձակի համապատկերում, որպես նահապետական միջավայրի արտացոլման և բարքերի ու սովորույթների ներկայացման տարածական տիրույթ, Աղայանն ընտրում է արևելահայ գյուղը: Իրերի և երևույթների խոր դիտողականության շնորհիվ գրողը կերտում է վիպագրության արտացոլման, մարդկային հոգեբանության բացահայտման իր ինքնատիպ ձեռագիրը: «XIX դարի մեր վիպագրության արտացոլման հիմնական օբյեկտներից մեկը գյուղական ու գավառական փոքր քաղաքի կյանքն էր,– նկատում է գրականության տեսաբան Հասմիկ Մարգունին: – Դա միանգամայն օրինաչափ երևույթ էր մեր վիպագրության համար նախ և առաջ այն պատճառով, որ դա մեր ժողովրդի ճնշող մեծամասնության կյանքի արտացոլումն էր հանդիսանում և երկրորդ՝ այն, որ պատմական տվյալ ժամանակաշրջանում կյանքի սոցիալ-դասակարգային հակասությունները այդտեղ դեռևս ավելի խոր, ավելի բյուրեղացած էին արտահայտվում, քան քաղաքում, ուստի ամենից հարմար էին վիպական լայն ընդգրկման ու իմաստավորման համար»[1]:

Ժամանակի արևելահայ վիպագրական արձակի մասին Ն. Աղբալյանը գրում է. «Թէ Աբովեան՝ գլխաւորապէս, թէ Պռօշեան՝ իւր սկզբի գրուածքում՝ գիւղացուն իդէալականացնում էին: Աղասին գիւղական ժողովուրդի առաքինութիւնների և բարեմասնութեանց մի մարմնացում է ունի. այնպիսի մտքեր, որոնք դժւար կարող են լինել 1820-ական թ.-ների գիւղացու գլխում: Սօսն ու Վարդիթերը մի-մի ներկայացուցիչներ են գիւղացու լաւագոյն յատկութիւնների: Թէ հօր, և թէ որդու գրքերում գիւղական կեանքը այնպէս է ցոյց տրւած, որ կարծես թէ այդ կեանքը մի հովերգութիւն է, լի երջանկութեամբ, սիրով, հաւատարմութեամբ. սակայն ժամանակի ոգին այնպէս չէր, որ թոյլ տար

[1] **Մարգունի Հ.**, Ակնարկային գրականության ժանրերը // «Գրական ժանրեր, Պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը», Երևան, 1973, էջ 300:

շատ պոկուել իրական կեանքից. երկու հեղինակների գրուածներումն էլ իդէալական ու իրական ձեռք-ձեռքի տուած են գնում. ունենալով իդէալական մարդիկ, նրանք աւելի մեծ չափով իրականից առած լուսանկար անձնաւորութիւններ ունին»[1]:

Ղ. Աղայանը զարգացրեց գեղարվեստական գրականության մեջ ծավալված հասարակական նոր տեղաշարժերի, գյուղական իրականության մեջ տեղ գտած երևույթները, ընդգծեց նահապետական գյուղաշխարհում ազգային արժեքների պահպանության կարևորությունը, նոր իրողությունների ի հայտ գալը: «Հայ գյուղագիրների մեծամասնության իդեալն Աբովյանի գյուղն է և նրա «շոկոլադից շինած» գյուղացին, ուր գառն ու գայլը միասին արածում են, և ուր սարդերն ու ճանճերը հավասարապես յերջանիկ են: Նրանք չեն հասկանում, վոր պատմության անիվը չի կարելի հետ տանել, վոր «ինքնուրույն», «անկախ», մանր սեպհականատիրական տնտեսությունն ապագա չունի: Բայց հայ գյուղագիրների մեծամասնության դասակարգային պատկանելությունն ե դրել այդպիսի կնիք այդ գյուղագիրների հասարակական իդեալի վրա»[2],– նկատում է ակադեմիկոս Ա. Տերտերյանը:

Նահապետական կենցաղավարությանը վերաբերող առանցքային հարցադրումներով, ժամանակի ազգային-հասարակական կյանքի գեղարվեստական լայնահուն ընդհանրացմամբ առանձնանում է «Բաժանություն» (1881) վիպակը: Աղայանն այստեղ կերտեց ժամանակի իրական կյանքի գեղարվեստական պատկերը՝ փոքր կտավի նյութ դարձնելով իր կյանքի պատմությունը, անձնական ապրումները: Ինչպես նշում է Հ. Մուրադյանը, «այդ պատմվածքում Աղայանը տալիս է նահապետական հարաբերությունների վերափոխումը կապիտալիստականի և նոր տնտեսական հարաբերությունների հիմքի վրա ձևավորվող մարդու աշխարհայացքն ու հոգեբանությունը: Կապիտալիստական հարաբերությունները դժվարին կացության մեջ են դրել նահապետական ընտանիքը: Ուր մի ժամանակ թագավորում էր հաշտություն և համերաշխություն, ուր առաջ չկար շահերի, ճաշակների և հասկացողությունների տարբերություն, այնտեղ այժմ իշխում է երկպառակության ոգին՝ էգոիզմը»[3]:

Ինքնակենսագրական հիմքեր ունեցող «վիպադրամայի»[4] դեպքերը ծավալվում են Քաջենք ավանում: Վիպական գործողությունների տեղանքը ներկայացնելիս Աղայանը պատկերում է գավառական բարքերով ապրող Շուլավերի Քաջենք ավանի մարդկանց կենցաղավարությունը: Թիֆլիսի հարևանությամբ գտնվող հոյակապ քաղաքում՝ Շուլավերում, գեղեցիկ տները նահապետական խրճիթների հետ կողք կողքի էին: Հեռագրատան,

---

[1] **Աղբալյան Ն.**,Ղոչոաղը // «Մուրճ», 1897, հ. 7-8, էջ 1061:

[2] **Տերտերյան Ա.**, Նկատողություններ մեր գյուղագիրների մասին, Յերևան, 1927, էջ 8:

[3] **Մուրադյան Հ.**, Ղազարոս Աղայան (կյանքը և գործը), Երևան, 1941, էջ 65:

[4] Հեղինակի՝ իր ստեղծագործությանը տված ժանրային բնութագիրն է:

փոստատան գոյությունն արդեն իսկ արդիականության շունչ էր հաղորդում հին կենցաղավարությանը։ Գյուղաքաղաքն ուներ գավառապետ և հաշտարար դատավոր. «… Այո, միևնույն տան մեջ դուք կտեսնեք աղա Մամադ խանի, Վարանցովի և իշխան Դոնդուկովի ժամանակի տարազով հագուստներ։ Ես օրինակ բերեցի Շուլավերը, բայց մեր վիպադրաման կատարվում է Քաջենք ավանում»։ Հետաքրքրական է, որ գեղագետ վիպագիրը ներկայացնում է միջավայրի ամբողջ գունապնակը՝ անդրադառնալով կանանց անազատության խնդիրներին. «Այդպիսի մի աններդաշնակ խառնուրդ էին ներկայացնում և նրանց կանայքը։ Նրանց մեջ կային երես փաթաթածներ ու երեսբացներ, ինչպես կային չխոսկաններ և չխոսողներ»[1]։ Վիպագիրը կարողացել է նուրբ բնութագրումներով ներկայացնել հասարակական կյանքում տեղ գտած արատավոր բարքերի շրջանակը։ Նա հանդես է գալիս լուսավորության, կրթության պաշտպան, գեղարվեստական այս փոքրածավալ, բայց բովանդակալից երկով փորձում է ցույց տալ առաջընթացի, ինչպես նաև ավանդականի և արդիականի միաձուլման կարևորությունը։

Կեցության և կենցաղավարության տիրույթում սկսել էր տիրապետել նյութական շահը։ Աղայանենք ևս չորս եղբայրներ են եղել (Ղազարոս, Արություն, Սարգիս և Գրիգոր) (էջ 410), որոնք 1880-ականների սկզբին իրենց հայրական ժառանգության մաս կազմող տները, այգիներն ու վարելահողերը բաժանել են և առանձին տնտեսություններ կազմել։

Ընտանիքի անդամների փոխհարաբերություններում տեղ գտած վեճերը դարձնելով դիպաշարի զարգացման գիծ՝ Աղայանը ներկայացնում է ժամանակաշրջանի հայկական նահապետական աշխարհի խարխլումները՝ բարոյական արժեքների անկմամբ և նյութական շահի մոլուցքով պայմանավորված։ Նրանց մանկությունը ներկայացնելիս գրողն ընդգծում է. «Դեռ մյուս երկուսը չեղած, սրանք մեծացել էին միասին, բայց և այնպես, ինչպես Հակոբն ու Եսավը. մեկին հայրն է եղել սիրում և մյուսին մայրը. մոր սիրածը հառաջ էր գնացել, հոր սիրածը ետ մնացել, և այս պատճառով ինչքան Սմբատը սիրում էր Ավագին, Ավագը երբեք սիրո նշան չէր ցույց տալիս։ Նա մանկության նախանձը շարունակում էր և հասակն առած ժամանակ։ Եղբոր հառաջադիմությունը նրան չէր ուրախացնում, այլ տխրեցնում էր, մանավանդ որ վերջ ի վերջո հայրն էլ Սմբատին էր սիրել և օրհնությունը նրան էր տվել» (էջ 305)։

«Քարվանսարայի» վերածված տան ծառաներից մեկի՝ Համբոյի զրույցի միջոցով բացվում է կենցաղային հարցերի շուրջ ստեղծված վեճերի կծիկը։ Գերդաստանի օրինակելի ավագների՝ Եղիսաբեթ խանումի, ապա Օհանես աղայի մահից հետո խաթարվում է ընտանեկան անդորրը։ Նահապետական

---

[1] **Աղայան Ղ.**, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962, էջ 305 (այսուհետ այս հրատարակությունից բերված մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ)։

հայ գյուղում սկզբնավորվում է առանձնանալու, ինքնուրույն ընտանեկան կենցաղավություն սկսելու միտումը: Վիպակում բաժանության արատավոր երևույթն ամենուր է. «Ինչ որ բաժանության խոսք ու զրույց է եղել մեր տան մեջ, էլ ոչ մի օր հանգիստ չունինք: Եղբայրքս իրար հետ են կռվում, մեր կնանիքն իրար հետ, երեխեքն ու ծառաներն իրար հետ: Կհավատա՞ս, որ ասեմ, մեր շներն ու տավարներն էլ են սկսել կռվել իրար հետ, կարծես բաժանության հոտն առած լինեն: Մեկ խոսքով՝ կռիվը, ծեծը, խռովությունը մեր տան մեջ դառել է վարակիչ հիվանդություն» (էջ 301) : Ընտանիքի անդամների բաժանության միտքը հնի և նորի բախման հետևանք համարող գրողը բացատրում է երևույթի՝ տնտեսական գործոնով պայմանավորված լինելու կարևորությունը: Աղայանը հոգեբանական վերլուծություն է կատարում՝ մանկությունը դիտարկելով հերոսի աշխարհայացքի և անձի ձևավորման կարևոր կետից: **Դիպաշարային շարժընթացը զրույցի միջոցով ներկայացնելու ձևը բնորոշ է թե՛ «Արություն և Մանվել» ինքնակենսագրական վեպին, թե՛ «Երկու քույր» վիպակին, առհասարակ աղայանական գեղարվեստական արձակին:**

Գյուղաշխարհում տեղ գտած հետադիմությունը, խավարը, նախապաշարմունքների ու սնոտիապաշտական հավատալիքների կործանարար ազդեցությունը նկատելի են հերոսների գործողությունների զարգացումներում: «Ասում ենք այն ժամանակ մարդիկ լավն էին, սեր կար, մտերմություն կար, իսկ հիմա ամեն ինչ տակնուվրա է եղել: Մինչդեռ քանի տեսնում ենք, որ մեր երևակայած երջանիկ ժամանակի մարդիկը ևս դժգոհ են եղել իրանց ժամանակից և ասել են.

Փչվի էսպես ժամանակը.
Հույս ու հավատ, սեր չկա…» (էջ 309):

Ավանդական գավառական գյուղաշխարհին հակադրվում է նոր իրողությունների, երևույթների ի հայտ գալու, առաջընթացի գաղափարը: Գավառական գյուղաքաղաքում տեղ գտած բարքերը ևս չեն վրիպում Աղայանի տեսադաշտից: Փոքր կտավի այս երկում նա համապարփակ ներկայացրել է իրականության տխուր պատկերը. «Բաժանությունը գուցե և մի չարիք է, բայց այդ չարիքն այժմ անհրաժեշտ է: Հին ժամանակներում եթե բաժանվել են, գուցե ուրիշ պատճառ ունենային և չբաժանվելու, մինչդեռ այդ հնարը մենք այսօր չունինք: Հնար չունինք, որովհետև հող չունինք» (էջ 314),– ասում է փոքր եղբայրը՝ հիշատակելով հայոց առասպելական անցյալը: Հենց նրա՝ Սմբատի կողմից ընդունելի տեսակետներն են, որ Մարպողոսին հնարավորություն են տալիս առավելապես խորանալու Ավետարանում տեղ գտած քրիստոնեական ճշմարտությունների մեջ:

Վիպական ամեն մի կերպար հարստացնում է գործողությունների զարգացման դաշտը՝ իր անձնական տեսակետների համար հիմնավորումներ փնտրելով: Հերոսների բնավորություններն ուրվագծելիս վիպագիրն անդրադառնում է յուրաքանչյուր հերոսի կատարած աշխատանքին:

Աշխատանքային գործիքների, արհեստի, կրթության, լուսավորության գաղափարական ուղենշային նշանակությունը գրողը գործնական կիրառության մեջ է ներկայացնում: Եղբայրներից Ավագը երկրագործ էր. գութանի մաճը ձեռքին գյուղատնտեսությամբ զբաղված այս հերոսը «վնասակար շռայլություն» էր համարում նոր գործիքների կիրառումը: Ճիշտ նրա հակապատկերն էր փոքր եղբայրը՝ Արշակը. գրողը նրան բնութագրում է որպես նորի պաշտպան. «... ուզում էր ամբողջ գյուղի սովորությունը» փոխեր: Ինքնակերպավորված հեղինակը Սմբատի միջոցով մարմնավորում է ժամանակի վարժապետին, ներկայացնում հասարակության ընկալումները կրթության և լուսավորության վերաբերյալ: Դպրոցն ավարտելուց հետո նա ուսուցչությամբ էր զբաղված: Իր աշխարհայացքով, վեհ գաղափարներով, առաջադեմ մտածողությամբ հերոսը միանգամայն տարբերվում է բոլորից: Նրա կարծիքով՝ բաժանությունը պետք է արդար և հավասար լինի: Սակայն, ինչպես վկայում են հասարակական մեծ կյանքի իրողությունները, «արդար բաժանություն» անելու ոչ մի հնարավորություն չի լինում: Հոգեբանական բացահայտումներն աստիճանական զարգանում են ստանում. նախապաշարումների կաշկանդիչ կապանքներին կառչած հերոսի համար գրբացի խոսքը եղբոր նկատմամբ ատելությամբ լցվելու պատճառ է դառնում: Շահի մոլուցքով տարված արյունակից եղբայրների համար կարևորություն է ստանում անձնական չափաբաժինը ընդլայնելը: «Գոյության կռվի» մասին մտածելով՝ նրանք մոռացել էին բարոյական արժեքների կարևորությունը:

Ընտանիքի տղամարդկանց ներկայացնելուց հետո Աղայանն անդրադառնում է «աններդաշնակ խառնուրդ» կազմող կանանց: Վիպակը հարուստ է բարքագրության բազմաշերտ ընդգրկումով. կենցաղագրության ակնարկներում նշվում է կնոջ չխոսկանության, նոր ձևի հագուստ կրելը սնպատվություն համարելու մասին: Այս մանրամասնությունները գյուղական կյանքում տեղ գտած հին բարքերի և կենցաղի յուրօրինակ արտահայտություններ էին: Նահապետական աշխարհի սովորույթների սրբացումը մարդկանց կողմից առավելապես հարստացնում է վիպական շերտը: «Ավանդական համակարգում անհատին իր սոցիալական դերին ամրացնում է ժառանգած կենսափորձը: Համայնքը կենսունակ է դրա սրբագործմամբ, կայունացմամբ և պահպանմամբ մշտապես կրկնվող սովորույթների և ծիսական վերարտադրությունների միջոցով»[1],– գրում է Ա. Ալեքսանյանը: Առաջին հայացքից ստրկության տպավորություն ստեղծող ավանդույթի ուժը նահապետական աշխարհի սրբացած սովորույթ էր: Ազգային կյանքում տեղ գտած սովորույթների և նոր կենցաղավարության բախումն Աղայանը կապում է մի շարք երևույթների ի հայտ գալու հետ. «Ստրկության ազատությունը և վերջն էլ դատական վերանորոգությունը, գյուղական ինքնավարությունը, նորամուտ

[1] Հայ վեպի պատմություն (19-րդ դար), Երևան, 2005, էջ 155:

լուսավորությունը, երկաթուղի, հեռագիր և այլն, մին մինի հետևից հանկարծ գալով՝ շլացրին ժողովրդին, մի հանկարծական փոփոխություն ձգեցին նրա նիստուկացի և վարք ու բարքի մեջ» (էջ 310):

Վիպական կոնֆլիկտը թեժանում է Մարպողոսի հայտնությամբ: «Հին դպրոցի աշակերտի» նկատմամբ Աղայանի հակակրանքն անթաքույց է: Մարպողոսը հասարակության մեջ տեղ գտած արատավոր երևույթները ներկայացնող հավաքական կերպար է, ով «գիտեր ուտել և ուտեցնել, շահել և շահվել, բադի պես ընկղմվում էր պղտոր լճերի մեջ և ցամաք դուրս գալիս»[1]: Եղբայրների վեճերին «բարեկամաբար» մոտենալով՝ նա փորձում է էլ ավելի թեժացնել իրավիճակը՝ գործողությունների զարգացումն իր օգտին պայմանավորելով: Նա համառորեն խցկվում է ընտանքի անդամների բաժանության մեջ՝ լարվածություն հաղորդելով առանց այդ էլ սրված հարաբերություններին: «Դյութչության արվեստով մեծ փիլիսոփան» հանդգնում է Ավետարանի իմաստությունները հարմարեցնել ընտանիքում տեղ գտած իրավիճակին: Աղայանը գործնականում ցույց է տալիս միջավայրի՝ հերոսի վրա ունեցած ներգործությունը. «Այս է դարձյալ պատճառը, որ մի շատ ազնիվ և կրթված երիտասարդ ազնիվ է միայն կյանքից հեռու եղած ժամանակ, բայց երբ մտնում է կյանքի մեջ, գործ է ունենում խորամանկ և խարդախ մարդկանց հետ հետ, զրկողության և հալածանքի ենթարկվում, որին բարեկամ է համարում, չարակամ է դուրս գալիս, ի չար են գործ դնում իր հավատը և անձնվիրությունը, այնուհետև նա ցած է իջնում իր իդեալական բարձր գահից ու ասում ինքն իրան. «Եթե այս տխմարն իր տգետ տեղովը ինձ կխաբի և կխնդա վրաս, ինչու՞ ես սրա գլխին մի այնպիսի օյին չդնեմ, որ ինքն էլ զարմանա»: Եվ մի քանի փորձից հոտո երբեմնի ազնիվ երիտասարդը դառնում է խարդախության տիպար» (էջ 310):

Եղբայրներից փոքրը՝ Արշակը, որը վայելում էր ուսուցիչ Սմբատի հովանավորչությունը, գտնում էր. «… բաժանությունը պետք է ամուսնության պես սուրբ մի սուրբ օրենք լինի, այլապես ամուսնության համար ասված օրհնությունը, թե՝ «Աճեցեք և բազմացարուք և լցրեք զերսկիրս», կատարումն չի ստանալ» (էջ 316): Նա ցույց է տալիս, որ բաժանության երևույթը չարիք է, սակայն իրենց ընտանիքում այն դարձել է հրատապ: Եղբայրներից Տիգրանը անդրադառնում է Նոյի ժամանակին, մեջբերում իր ուսուցչի խոսքը, ով ասում էր, որ մեր աշխարհը լցված է բաժանությամբ: Օրինակ բերելով Հայկ Նահապետին՝ Տիգրանն ասում է. «… Հայկը Կադմոսին թողնում է Ասորեստանի սահմանում, Արմենակին ուղարկում այս ու այն կողմ, ինչպես Սիսակին՝ Սյունիք և Աղվանք, Շարային՝ Շիրակ և մյուսներին էլ այսպես: Այսպես էին և Արշակունիք. մեկին իրանց մոտ էին պահում, մյուսներին դես ու դեն ցրվում: Արշակը՝ որպես առաջադեմ երիտա-

[1] Հայ վեպի պատմություն (19-րդ դար), էջ 307:

սարդ, հակադրվում է հայոց առասպելական ժամանակին՝ ասելով. «Բաժանությունը գուցե մի չարիք է, բայց այդ չարիքն այժմ անհրաժեշտ է» (էջ 316)։

Մարպողոսի ստորությունները անցնում են սահմանից. եղբայրները արդեն ծեծկրտուքի են դիմում։ Նրանց թեժացած փոխհարաբերությունները նկարագրելուց հետո Աղայանը ներկայացնում է «Միջնադեպ» հատվածը, որտեղ հանգամանորեն ներկայացնում է Քաջենք գյուղաքաղաքի տեղագրությունը։ Հայտնվում է նոր հերոս՝ Արմենակը, որը Սմբատի ուղեկցությամբ ուսումնասիրում է տեղանքը։ Նրանք շարունակ զրուցում են հայ ժողովրդի անցյալից։ Սմբատն ընդգծում է հայ կնոջ առաքինի կերպարը՝ օրինակ բերելով պատմական անցյալը։ Խոսելով հայ կնոջ առաքինությունների մասին՝ Արմենակն օրինակ է բերում Տիկին Զվիկին, որին Ղազար Փարպեցին հայոց կանանց մեջ ամենից առաքինն էր համարում։ «– Այդ ճշմարիտ է. գտիր և մյուս կինը, որ ընդմիշտ պիտի մնա իբրև օրինակ առաքինի հայ կնոջ. նա՝ որ իր հայրենի սուրբ կրոնին հավատարիմ մնալը վեր դասեց թագուհու թագից և ծիրանուց» (էջ 324),– ասում է Արմենակը։ Նրանք արդրադառնում են նաև Վարդան Մամիկոնյանի դստերը՝ Շուշանիկին։ Նրա նահատակությունը ևս կապված էր քրիստոնեական հավատի անձնուրաց պայքարին։ Սմբատը զրուցում է Արմենակի հետ. խոսում են գրերի գյուտից՝ գտնելով, որ կրթության ճանապարհով կարելի է գնալ անսայթաք, առանց վերուվար թռչկոտելու։ Արմենակը հավելում է Սմբատին. «Բարոյական կյանքի նավի շոգեշարժը չի գտնված. նա դեռևս այս ու այն կողմից փչացած հողմերի ձեռքին մի խաղալիք է։ Ինչպես որ կան մարմնական համաճարակ ցավեր, նույնպես կան և ոգեկան ցավեր, որոնք քամու պես տարածվում են ժողովրդի մեջ ո՛վ գիտե՝ որտեղից և ինչպես, և այս բանը կրկնվում պարբերաբար» (էջ 321)։

Սմբատի մտատանջությունները սևեռվում են արդար բաժանության վրա. նա դժգոհում է, որ չկա մի անխախտելի կարգ, որով կարելի լիներ արդար բաժանություն կատարել։ Նա կարծում է, որ ամբողջի մեջ ներդաշնակություն կլիներ, եթե մասերի մեջ հավասարություն լիներ։ Սմբատի կինը, քաղաքաբնակ լինելով, բավական բարեկիրթ անձնավորություն էր։ Ոսկեհատը գեղեցիկ արտաքին ուներ։ Նրանք սիրո միությամբ էին իրենց կյանքը ներհյուսել։ Հենց այդ արդար բաժանության չգոյությամբ էլ ավարտվում է վիպակը։

Ղ. Աղայանը գեղարվեստորեն ներկայացրել է նահապետական աշխարհի գույները, անհատի և հասարակության խնդիրները, կենցաղում տեղ գտած արատավոր կողմերը, իրերի և երևույթների, լուսավորության ընկալման իր տեսակետները։ Հմուտ գեղագետը կարողացավ կերտել միանգամայն արդիական հնչեղություն ունեցող հարցադրումներ։ Դիպաշարային այս գիծը հետագայում ծավալում ստացավ արևելահայ մեկ այլ գրողի՝ Ալ. Շիրվանզադեի «Քառս» (1896-1897) վեպում։ Երկու գրողների երկերի թեմատիկ միավորումը ընտանեկան հարկի ներքո ստեղծված հայրական ժառան-

գության շուրջ ստեղծված կծիկն էր։ Գավառական գյուղաքացաքի բարքերի ներկայացումը Աղայանի կողմից դարձավ իրականության գեղագիտական վերարտադրության միջոց։

Գրական արձակի ընձեռած հնարավորության սահմաններն Աղայանը կիրառեց իրողությունների արտացոլման, խավարի և լուսավորի անշեջ պայքարի հակադրությունը։ Մարդկային հուզաշխարհի և հոգեբանության առավել խորքային ուսումնասիրության միջոցով գրող-գեղագետը ներկայացրեց բնության ներդաշնակությունը խախտած մարդկային հարաբերությունը կաշխանդող ներքին կանոններ։ «Սկիզբ առնելով Աբովյանի վեպով, զարգանալով թե՛ ռոմանտիկական, թե՛ ռեալիստական գրական ուղղությունների հունով, հայ կյանքի ընդգրկման լայնությամբ, հասարաական հնչեղություն ստացած խնդիրներին պատասխանելու իր դրսևորած ընդունակությամբ, իր կոնցեպտուալ մակարդակով, գեղագիտական բազմահնչեղությամբ ու վեպի մշակված ենթատեսակետներով՝ XIX դարի հայ վիպագրությունը տվյալ ժամանակաշրջանի ազգային զարգացած վիպագրություն ունեցող գրականությունների թվին է պատկանում»[1]։

Աննա Թորոսյան – *Գյուղաշխարհի նահապետական բարքերի պատկերները Ղազարոս Աղայանի «Բաժանություն» վիպակում*

Հոդվածը նվիրված է Ղազարոս Աղայանի «Բաժանություն» վիպակի համակողմանի քննությանը։ Վիպակում նահապետական բարքերից ու սովորություններից զատ պատկերված է նահապետական ընտանիքի կենցաղավարությունը, չորս եղբայրների հայրական ունեցվածքի բաժանումը։ Ղ. Աղայանը գեղարվեստորեն ներկայացրել է նահապետական աշխարհը, անհատի սոցիալական խնդիրները, կենցաղում տեղ գտած արատավոր կողմերը, հասարակական երևույթների ընկալումները։

Анна Торосян – *Фотографии сельской недвижимости в сельском мире в романе Казароса Агаяна «Отделение»*

Ключевые слова *– Статья, роман, жизнь, патриархальная семья, отцовская собственность, братья, мир, жизнь, личность*

Статья посвящена всестороннему исследованию романа Газаросы Агаяна «Развод». Помимо патриархальных нравов и обычаев, в романе изображена жизнь патриархальной семьи, раздел отцовской собственности четырех братьев. Г. Агаян художественно представил патриархальный мир, социальные проблемы личности, порочные аспекты жизни, восприятие социальных явлений.

---

[1] **Մարգունի Հ.**, նշվ. աշխ., էջ 300։

Anna Torosyan – ***Depictions of Rural Patriarchal Customs in Ghazaros Aghayan "Division" Novel***

Key Words *– Article, novel, examination, life, customs, patriarchal family, brothers, world, phenomena*

The article is dedicated to the comprehensive examination of Ghazaros Agayan's novel "Divorce". In addition to patriarchal manners and customs, the novel depicts the life of the patriarchal family, the division of the paternal property of the four brothers. Gh. Aghayan artistically presented the patriarchal world, the social problems of the individual, the vicious aspects of life, the perceptions of social phenomena.

Ներկայացվել է 09.03.2021
Գրախոսվել է 06.04. 2021
Ընդունվել է տպագրության 14.04.2021